# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2016թ. թիվ 15-Ա

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56[1] հոդվածի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 41 հոդվածով, 42 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի գ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և հողային պետական տեսչության» 19.11.2015թ. N 06 որոշումը և 20.08.2015թ. թիվ 06 ակտը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետը խախտելու, պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով առանց մրցույթի տրամադրելու և ՀՀ կառավարության 28.10.2010թ. «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները խախտելու համար Դսեղ համայնքի ղեկավար Նորիկ Քոչարյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Տուգանքը անձնական միջոցներից 15-օրյա ժամկետում մուծել պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին:

3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

4. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Դսեղ համայնքի ղեկավար Նորիկ Քոչարյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունվարի 22
ք.Վանաձոր